ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

ՇՈՒՄ Գիտակրթական կենտրոն ՀԿ

Ավարտական հետազոտական աշխատանք

Թեմա՝ Աշխարհագրության ուսուցման գործընթացի հոգեբանամանկավարժական հիմունքները և սկզբունքները

Կատարող՝ Սաթենիկ Սուրենի Հովհաննիսյան

«Մուսայելյանի Ռ. Առաքելյանի անվան միջն. դպրոց» ՊՈԱԿ, Աշխարհագրություն

Ղեկավար՝ Արմեն Ներսիսյան

ԳՅՈՒՄՐԻ 2022

Բովանդակություն

Ներածություն..... էջ 3
Գլուխ 1.Աշխարհագրության ուսուցման հոգեբանական և դիդակտիկական հիմունքները
1.1. Աշխարհագրության ուսուցման գործընթացի հոգեբանամանկավարժական հիմունքները .....էջ 5
1.2. Աշխարհագրության ուսուցման գործընթացի հոգեբանամանկավարժական սկզբունքները .....էջ 8
Գլուխ 2. Ուսուցիչն ու աշակերտն՝ իբրև ուսուցման գործընթացի սուբյեկտներ
2.1. Ուսուցչի դերն ուսուցման շարժառիթների ձևավորման գործում ..... էջ 10
2.2. Աշխարհագրության ուսուցչի մանկավարժական շփման ոճերը ..... էջ 14
Եզրակացություն..... էջ 18
Օգտագործված գրականության ցանկ.....էջ 19

Ներածություն

Ուսուցումը՝ գիտելիքների, կարողությունների ու հմտությունների նպատակաուղղված, պլանաչափ և համակարգված յուրացման գործընթաց է, որը կազմակերպվում է մասնագետների կողմից և հանդիսանում է կրթության հիմնական ուղի:

Ուսուցումը սերտ կապված է դաստիարակության հետ: Ուսուցումը պատմականորեն փոփոխվող գործընթաց է: Այն փոփոխվում է կախված արտադրական հարաբերություններից, հասարակության պահանջմունքներից, սոցիալական պայմաններից, հասարակության հոգևոր, մշակութային արժեքներից և այլն: Ուսուցման գործընթացի շարժիչ ուժը հակասությունն է՝ մի կողմից հասարակության պահանջների, մյուս կողմից սովորողների փաստացի պատրաստության մակարդակի միջև:

Աշխարհագրության ուսուցումը գիտելիքների տարրերի ուղղակի փոխանցումը չէ աշակերտին, այլ նրա կողմից գիտակցված ներթափանցումն է ուսումնասիրվող առարկայի մեջ: Հոգեբանները հանգել են այն եզրակացության, որ երեխայի մտավոր զարգացումը բնութագրվում է ոչ միայն յուրացված գիտելիքների ծավալով ու որակով, այլև նրա մտավոր գործունեության որակով, տրամաբանական գործողությունների համակարգով, որոնց աշակերտը արդեն տիրապետում է: Ուստի, ուսուցումը պետք է ձևավորի աշակերտի իմացական ինքնուրույնությունը:

Նախկինում դպրոցական կրթությունը կառուցվում էր դաստիարակող ուսուցման սկզբունքով, այսինքն գլխավոր նպատակը ուսուցանումն էր: Սակայն այսօր որպես գլխավոր նպատակ համարվում է ուսուցանող դաստիարակությունը՝ այսինքն անձի դաստիարակումն է ուսուցման միջոցով: Ուստի ուսուցման կազմակերպման սկզբունքներում և մոտեցումներում պետք է փոխվեն առաջնահերթությունները: Ավելացավ աշակերտի ինքնուրույնության մասնաբաժինը, մտավոր ունակությունների՝տրամաբանական ու ստեղծագործական մտածողության զարգացումը, կարևորվեց նրա կողմից գիտելիք ձեռք բերելու ձգտման խթանումը: Հետևաբար՝ անհրաժեշտ դարձավ յուրահատուկ ուշադրություն դարձնել սովորողի մտավոր կարողությունների զարգացման հնարավորությունների և ուսուցման շարժառիթների ձևավորման վրա:

Շարժառիթը՝ ներքին մղում է, որը ստիպում է սովորողին կատարել գործողություն: Ուսուցման գործընթացում այն աշակերտի կողմից սովորելու ցանկությունն ու ձգտումն է: Այսօր, ուսումնական գործընթացի կազմակերպումն իրականացվում է որոշակի սկզբունքներով: Դրանք են՝ սովորողների ինքնագործունեության, ինքնակազմակերպման, կոլեկտիվիզմի, դերային մասնակցության և պատասխանատվության սկզբունքները:

Ավանդական մանկավարժության պայմաններում ուսուցիչը կատարում էր երեք գործառույթ՝ տեղեկատվական, վերահսկող և գնահատող: Արդի պայմաններում ուսուցչի սոցիալական դերը բարդանում է, ավելանում են նրա պրոֆեսիոնալ (արհեստավարժական) պատրաստվածությանը ներկայացվող պահանջները: Այսպիսով, ժամանակակից ուսուցչի կարևոր հատկանիշներն են՝ **իրազեկությունը, պրոֆեսիոնալ վարքը, հուզական ճկունությունը և պրոֆեսիոնալ ինքնագիտակցությունը:**

Այսպիսով՝ ուսուցման ընթացքում սովորողների զարգացման կարևոր ուղիներից է աշխարհագրության նկատմամբ իմացական հետաքրքրության ձևավորումը: Իմացական հետաքրքրության ճիշտ ձևավորումը հանգեցնում է իմացական պահանջմունքի ձևավորման, որն էլ իր հերթին դառնում է մտածելակերպ, իսկ հետագայում ապրելակերպ:

ԳԼՈՒԽ 1. ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԵՎ ԴԻԴԱԿՏԻԿԱԿԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԸ:

1.1 Աշխարհագրության ուսուցման գործընթացի հոգեբանամանկավարժական հիմունքները

Ուսուցումը՝ գիտելիքների, կարողությունների ու հմտությունների նպատակաուղղված, պլանաչափ և համակարգված յուրացման գործընթաց է, որը կազմակերպվում է մասնագետների կողմից և հանդիսանում է կրթության հիմնական ուղի:

Ուսուցման ընթացքում յուրացվում է սերունդների սոցիալական փորձը, ձևավորվում հուզարժեքային վերաբերմունք շրջակա իրականության նկատմամբ,զարգանում են սովորողների ընդունակություններն ու հետաքրքրությունները:

Ուսուցումը սերտ կապված է դաստիարակության հետ: Ուսուցումը պատմականորեն փոփոխվող գործընթաց է: Այն փոփոխվում է կախված արտադրական հարաբերություններից, հասարակության պահանջմունքներից, սոցիալական պայմաններից, հասարակության հոգևոր, մշակութային արժեքներից և այլն: Ուսուցման գործընթացի շարժիչ ուժը հակասությունն է՝ մի կողմից հասարակության պահանջների, մյուս կողմից սովորողների փաստացի պատրաստության մակարդակի միջև: Դիտակտիկան դիտարկում է ուսուցման գործընթացը երկու տարբեր գործունեությունների՝ աշակերտի իմացական գործունեության՝ ուսումնառության և ուսուցչի մանկավարժական գործունեության՝ դասավանդման ամբողջության մեջ:

Աշխարհագրության ուսուցման ընթացքում աշակերտի իմացական գործունեությունը ներառում է՝

1. Աշխարհագրության գիտելիքների յուրացում,
2. Մտավոր ունակությունների և իմացական հետաքրքրությունների զարգացում,
3. Աշակերտի դիալեկտիկամատերիալիստական աշխարհայացքի և բարոյական հատկանիշների ձևավորում:

Աշխարհագրության ուսուցման ընթացքում աշակերտի իմացական գործունեության տեսակները



Աշխարհագրության ուսուցումը գիտելիքների տարրերի ուղղակի փոխանցումը չէ աշակերտին, այլ նրա կողմից գիտակցված ներթափանցումն է ուսումնասիրվող առարկայի մեջ: Հոգեբանները հանգել են այն եզրակացության, որ երեխայի մտավոր զարգացումը բնութագրվում է ոչ միայն յուրացված գիտելիքների ծավալով ու որակով, այլև նրա մտավոր գործունեության որակով, տրամաբանական գործողությունների համակարգով, որոնց աշակերտը արդեն տիրապետում է: Ուստի, ուսուցումը պետք է ձևավորի աշակերտի իմացական ինքնուրույնությունը:

Նախկինում դպրոցական կրթությունը կառուցվում էր դաստիարակող ուսուցման սկզբունքով, այսինքն գլխավոր նպատակը ուսուցանումն էր: Սակայն այսօր որպես գլխավոր նպատակ համարվում է ուսուցանող դաստիարակությունը՝ այսինքն անձի դաստիարակումն է ուսուցման միջոցով:

Այս պարագայում ուսումը դառնում է ոչ թե ինքնանպատակ, այլ սովորողի անձի դաստիարակման և զարգացման միջոց ու եղանակ:

Ուստի ուսուցման կազմակերպման սկզբունքներում և մոտեցումներում պետք է փոխվեն առաջնահերթությունները: Ավելացավ աշակերտի ինքնուրույնության մասնաբաժինը, մտավոր ունակությունների՝տրամաբանական ու ստեղծագործական

մտածողության զարգացումը, կարևորվեց նրա կողմից գիտելիք ձեռք բերելու ձգտման խթանումը: Հետևաբար՝ անհրաժեշտ դարձավ յուրահատուկ ուշադրություն դարձնել սովորողի մտավոր կարողությունների զարգացման հնարավորությունների և ուսուցման շարժառիթների ձևավորման վրա:

Շարժառիթը՝ ներքին մղում է, որը ստիպում է սովորողին կատարել գործողություն: Ուսուցման գործընթացում այն աշակերտի կողմից սովորելու ցանկությունն ու ձգտումն է:

Գիտելիքի ձեռք բերումն իրականանում է հետևյալ փուլերով՝ ընկալում, իմաստավորում, մտապահում և կիրառում: Նշված փուլերը սերտ փոխկապակցված են միմյանց հետ և միասին ապահովում են գիտելիքի յուրացման պատշաճ մակարդակը:

Ընկալումը՝ գիտակցության մեջ տեղեկության ընդունման ու մշակման պրոցեսների բարդ գործընթաց է:

Յուրացումը՝ սովորողի գիտակցության մեջ նոր գիտելիքի միաձուլումն է արդեն ունեցածի հետ:

Յուրացումը կարող է լինել երկու տեսակի՝ **տարերային** և **նպատակաուղղված**: Տարերային է, եթե այն կատարում է ինքնուրույն դիտարկման հետևանքով և նպատակաուղղված՝ եթե այն պլանավորված է և հետապնդում է կոնկրետ նպատակ: Նպատակաուղղված յուրացումը բաժանվում է երկու ենթատեսակի՝ 1. երբ կազմակերպվում և իրականացվում է աշակերտի կողմից, 2. երբ կատարվում է ուսուցման ընթացքում ուսուցչի նպատակային գործողությունների ներքո:

Իմաստավորել՝ նշանակում է գիտակցության մեջ փոխադարձ կապեր հաստատել նոր ընկալված և արդեն յուրացված գիտելիքների միջև:

Մտապահել՝ նշանակում է գիտակցության մեջ պահպանել նոր տեղեկությունը գիտելիքների համակարգում:

Կիրառել՝ նշանակում է օգտագործել գիտելիքը գործողության կատարման ընթացքում:

Այսպիսով, աշխարհագրական նյութի ճիշտ և արդյունավետ ուսուցման համար, ուսուցչին անհրաժեշտ է հստակ պատկերացնել աշակերտի գիտակցության մեջ նյութի

ընկալման, յուրացման և ամրապնդման մեխանիզմներն ու դրանց հոգեբանական հիմքերը:

1.2. Աշխարհագրության ուսուցման գործընթացի հոգեբանամանկավարժական սկզբունքները

Այսօր, ուսումնական գործընթացի կազմակերպումն իրականացվում է որոշակի սկզբունքներով: Ուսուցման գործընթացի սկզբունքները մշակվել են Լ.Մ. Ֆրիդմանի առաջավոր մանկավարժական փորձի վերլուծության և բազմաթիվ այլ հեղինակների հետազոտությունների և գիտափորձերի արդյունքների հիման վրա:

Սովորողների ինքնագործունեության սկզբունք: Ենթադրում է գործունեություն, որը սովորողը կատարում է ինքնակամ, առանց պարտադրանքի: Նշված սկզբունքը ապահովում է ուսուցման գործընթացի դրդապատճառապահանջմունքային կողմը:

Սովորողների ինքնակազմակերպման սկզբունք: Սկզբունքի էությունն է առարկայի ուսուցման միջոցով սովորեցնել աշակերտին ինքնուրույն կազմակերպել սեփական գործունեությունը:

Կոլեկտիվիզմի սկզբունքը ենթադրում է անձի զարգացումը կոլեկտիվում, աշակերտների շփման ու համագործակցության միջոցով, առանց ուսուցչի միջամտության:

Դերային մասնակցության սկզբունքը նախատեսում է աշակերտների անհատական գործառույթների բաշխում ուսումնադաստիարակչական գործընթացում:

Պատասխանատվության սկզբունքի էությունն այն է, որ աշակերտն ընկալի, որ հասարակության մեջ իր պահվածքը պետք է համապատասխանի հասարակության կողմից ընդունված նորմերին: Պատասխանատվություն կրել իր կողմից կատարված յուրաքանչյուր գործողության համար: Այսինքն, սա աշակերտի, որպես քաղաքացու, գիտակցված պահվածքն է դասագործընթացում և հասարակության մեջ, ընդունված նորմերին համապատասխան:



Գլուխ 2. ՈՒՍՈՒՑԻՉՆ ՈՒ ԱՇԱԿԵՐՏՆ՝ ԻԲՐԵՎ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՍՈՒԲՅԵԿՏՆԵՐ

2.1. Ուսուցչի դերն ուսուցման շարժառիթների ձևավորման գործում

Ուսումնադատիարակչական գործընթացը սուբյեկտների (ուսուցիչ-աշակերտ) սոցիալական փոխներգործության ձև է, որն առաջանում է նրանց միջև գիտելիքների, սոցիալ-մշակութային նորմերի, ստեղծագործական և հուզարժեքային փորձի փոխանակման ընթացքում: Ժամանակակից պայմաններում ուսումնադաստիարակչական գործընթացը դիտարկվում է իբրև սովորողների կյանքի նախապատրաստող համակարգի բաղադրամաս, քանի որ այս ընթացքում է տեղի ունենում անձի կայացումը, նոր գիտելիքների և հմտությունների ձևավորումը, որոնք անհրաժեշտ են մարդուն հասարակության մեջ իրենց տեղը գտնելու և կայանալու համար: Այս պարագայում ուսուցիչը աշակերտների նկատմամբ զբաղեցնում է երկակի դիրքորոշում՝ միաժամանակ աշխատելով ամբողջ խմբի հետ, նա աշխատում է նաև առանձին աշակերտի հետ անհատապես, կազմակերպելով նրանց իմացական գործունեությունը, շփումն ու համագործակցությունը: Ավանդական մանկավարժության պայմաններում ուսուցիչը կատարում էր երեք գործառույթ՝ տեղեկատվական, վերահսկող և գնահատող: Արդի պայմաններում ուսուցչի սոցիալական դերը բարդանում է, ավելանում են նրա պրոֆեսիոնալ (արհեստավարժական) պատրաստվածությանը ներկայացվող պահանջները: Այսպիսով, ժամանակակից ուսուցչի կարևոր հատկանիշներն են՝ **իրազեկությունը, պրոֆեսիոնալ վարքը, հուզական ճկունությունը և պրոֆեսիոնալ ինքնագիտակցությունը:**

Ուսուցչի **իրազեկությունը՝** առարկայական և մեթոդական նորությունների յուրացման ունակությունն ու մակարդակն է: Իրազեկությունը ենթադրում է ուսուցչի հետևյալ կարողությունները՝ ընկալել առարկայական նոր հայեցակարգերը, մանկավարժական նոր տեխնոլոգիաները, ընտրել ծրագրեր և դասագրքեր այլընտրանքային տարբերակներից, գնահատել դրանք գիտական և մեթոդական տեսանկյուններից: Դպրոցական աշխարհագրության բովանդակության առանձնահատկությունը հատուկ պահանջ է ներկայացնում ուսուցչին: Ն. Ն. Բարանսկին միշտ նշում էր, որ աշխարհագրության ուսուցիչը պետք է կարողանա ընտրել և ընդհանրացնել ուսումնական նյութը, կապել այն տրամաբանական շղթայով, ստեղծել մեկ ամբողջություն: Ընդհանրացման իրականացման համար կարևոր

նախապայման է հանդիսանում կոնկրետացումը, որը հնարավորություն է տալիս ներկայացնել օբյեկտի առանձին կարևոր բաղադրամասերն ու հատկանիշները, ստեղծելով նրա լիարժեք պատկերը սովորողի գիտակցության մեջ: Կոնկրետացումն իրականացվում է դիտազննական պարագաների և ուսուցման այլ միջոցների օգնությամբ՝ նկարների, նկարագրական պատմվածքների, պատի քարտեզի և այլնի:

Շատ կարևոր է աշխարհագրության ուսուցչի համար գրատախտակին նկարելու (պարզ և հասկանալի նկարներ կատարելու), սխեմաներ կազմելու և գեղեցիկ գծելու, ինքնաշեն դիտազննական պարագաներ կառուցելու հմտությունը: Աշխարհագրության ուսուցիչը պետք է կատարելապես տիրապետի աշխարհագրության հետազոտության մեթոդներին (համեմատության, քարտեզագրության, վիճակագրության և այլն): Նա պետք է լինի գիտակ երկրամասագետ-հետազոտող: Հայրենի բնության և սեփական տեղանքի լավ ճանաչումը, հնարավորություն է տալիս ընտրել առավել արտահայտիչ օբյեկտներ և տարածքներ էքսկուրսիաների և տեղանքում գործնական աշխատանքների կազմակերպման համար: Աշխարհագրության առարկայի բնույթից ելնելով պետք է նշենք, որ շրջահայաց, բնության և տնտեսության առանձնահատկություններն ու խնդիրները ճանաչող որակյալ աշխարհագրության ուսուցիչը առավել մեծ արդյունքների կարող է հասնել հայրենասիրական, էկոլոգիական, էթնիկական և այլ բարոյական գաղափարների դաստիարակման գործում, քան այլ առարկայական ուսուցիչներ, ուստի աշխարհագրության ուսուցչի պատրաստությանը ներկայացվող պահանջները համապատասխանաբար առավել բարձր են: Մանկավարժի պրոֆեսիոնալիզմի կամ արհեստավարժության արտացոլումը նրա պահվածքն է, որն արտահայտվում է ոչ միայն նրա իմացական գործունեության, այլև մարդկային շփման մեջ: Մարդկային շփումը ուսուցման գործընթացում անվանում ենք մանկավարժական շփում: Մանկավարժական շփումն ընդգրկում է ուսուցչի և աշակերտի փոխհարաբերությունները: Մանկավարժական շփման հիմնական հատկանիշներն են՝ 1. ուսուցչի և աշակերտի սոցիալ-հոգեբանական փոխներգործությունը, առարկայական տեղեկության փոխանակումը; 2. դաստիարակչական ներգործությունը; 3. փոխհարաբերությունների կազմակերպումը; 4. շփման միջոցների առկայությունը (օր.՝

վիրտուալ շփում e-mail, skype և այլն): Մանկավարժական շփումը ենթադրում է սովորողների գործնեության և նրանց հետ փոխհարաբերությունների կազմակերպում, աշակերտի հոգեվիճակի ճանաչում:

Շարժառիթը, ներքին մղում է, որը ստիպում է սովորողին անցնել գործողության: Ուսուցման գործընթացում այն աշակերտի կողմից սովորելու ցանկությունն ու ձգտումն է: Շարժառիթայնությունը կարևոր նախապայման է ուսուցման արդյունավետության ապահովման համար և կարևոր փուլ աշխարհագրության յուրաքանչյուր դասի կառուցվածքում: Շարժառիթները լինում են՝ արտաքին (օր.՝ ստանալ բարձր գնահատական) և ներքին (իմանալ նորը, սովորել նորը): Ժամանակակից դպրոցի նպատակների իրականացման համար անհրաժեշտ է ձևավորել ներքին շարժառիթներ: Շարժառիթն ուղղված է՝ 1. ստացած գիտելիքների, կարողությունների և հմտությունների արժեքի գիտակցմանը, 2. գիտելիքի յուրացման անհրաժեշտության գիտակցմանը (հիմնականում ուշադրություն դարձնելով այնպիսի հոգեբանական գործոններին, ինչպիսիք են՝ ընկալումը, իմաստավորումը, մտապահումը), 3. դրական հուզական հոգեվիճակի ստեղծմանը ուսուցման գործընթացում, 4. սովորողների իմացական հետաքրքրասիրության ձևավորմանը:

Շարժառիթը կամ դրդապատճառը ինչպես կանոն ձևավորվում է դասի սկզբում: Այն պետք է տրվի ուսուցչի արտահայտիչ և զգացմունքային ներածական խոսքի միջոցով: Ն. Ն. Բարանսկին նշում էր, որ աշխարհագրության ուսուցիչը պետք է խոսի այնպես, որ **«նկարի բառերով»**: Աշխարհագրության ուսուցիչը պետք է կարողանա հակիրճ, բայց կենդանի ու պատկերավոր ներկայացնի ուսումնասիրվող օբյեկտն այնպես, որ հետաքրքրություն առաջացնի վերջինիս նկատմամբ, դրդի աշակերտին իմանալ ավելին այդ երևույթի մասին, հետաքրքրվի նրանով, ձեռք բերի նոր գիտելիք, այսինքն առաջացնի շարժառիթ երևույթի ուսումնասիրման նկատմամբ: Շարժառիթաստեղծ կարևոր եղանակներից է նաև աշակերտի անձնական կյանքի փորձի վրա հիմնվելը, դրանք կարող են լինել գիտելիքներ, որոնք նրանք ձեռք են բերել հանգստի վայրում, ճանապարհորդելիս և այլն: Ուսման շարժառիթը կարող է հանդիսանալ այլ առարկաներից ներգրավված գիտելիքների կիրառումը (պատմությունից,

տնտեսագիտությունից, բնապահպանությունից), քանի որ այն ընդլայնում է աշխարհագրության դասի տեղեկատվական կամ ինֆորմացիոն տարողունակությունը: Եվ իհարկե, մեծ խթան և շարժառիթ են հանդիսանում աշխարհագրության դասի կազմակերպման ձևերը: Յուրահատուկ դեր են խաղում ոչ ավանդական դասաձևերը (խաղերը, բանավեճերը և այլն), որոնց ընթացքում կիրառվում են ուսուցման ակտիվ մեթոդներ՝ մասնակի որոնողական, հետազոտական, պրոբլեմային: Գիտելիքների ստուգման ոչ ստանդարտ և հետաքրքիր ձևերի կիրառումը նույնպես հանդիսանում է աշակերտի ուսման դրդապատճառ: Շարժառիթների անընդհատ և կանոնավոր ձևավորումը հանգեցնում է սովորողների մոտ **կայուն իմացական հետաքրքրության** ձևավորման և դրդում նրանց աշխարհագրական գիտելիքների և կարողությունների գիտակցված յուրացման: Այս գործում առաջնային տեղ է գրավում ուսուցիչը: Ուսուցումն է խթանում աշակերտի հետաքրքրությունը ուսման և առարկայի հանդեպ, դրանով իսկ ընդլայնում է սովորողների մտավոր կարողությունները, ստեղծագործական ընդունակությունները, բարձրացնում է ուսման արդյունավետությունն ընդհանրապես: Ուսուցչի բարերար ազդեցությունը առարկայի հանդեպ աշակերտի մոտ ձևավորված վերաբերմունքի վրա համարվում է ուսուցչի մասնագիտական վարպետության ցուցանիշ:

Այսպիսով՝ ուսուցման ընթացքում սովորողների զարգացման կարևոր ուղիներից է աշխարհագրության նկատմամբ իմացական հետաքրքրության ձևավորումը: Իմացական հետաքրքրության ճիշտ ձևավորումը հանգեցնում է իմացական պահանջմունքի ձևավորման, որն էլ իր հերթին դառնում է մտածելակերպ, իսկ հետագայում ապրելակերպ:

2.2. Աշխարհագրության ուսուցչի մանկավարժական շփման ոճերը

Աշակերտների իմացական հետաքրքրասիրության ձևավորման գործում շատ կարևոր է դասի ընթացքում տիրող հոգեբանական մթնոլորտը: Ուսումնական այն

գործընթացը, որն ուղեկցվում են դրական հույզերով, պարգևում է երեխային ուրախության և բավարարվածության զգացում, ինչպես կանոն լինում է առավել արդյունավետ: Երեխայի հանգիստ և դրական հոգեվիճակը դասի ընթացքում լիովին կախված է ուսուցչից, նրա դիրքից և մոտեցումից: Աշխարհագրության ուսուցչի կողմից աշակերտների հետ փոխհարաբերությունների կազմակերպման ձևը ուսումնադաստիարակչական գործընթացում կոչվում է **ուսուցչի մանկավարժական շփման ոճ**: Ուսուցչի մանկավարժական շփման ոճի և որակի վրա ազդում են ուսուցչի անձնային հատկանիշները՝ նրա հուզական ճկունությունը, ստեղծագործական ինքնատիրապետումը, աշակերտի տարիքային հոգեբանական առանձնահատկությունների ճանաչումը: Առանձնացվում են աշակերտի հետ ուսուցչի շփման ոճի երեք տեսակ՝ 1. ավտորիտար կամ վարչահրամայական, 2. թողտվական, 3. դեմոկրատական կամ ժողովրդավարական:

Ավտորիտար կամ վարչահրամայական շփման ոճը ենթադրում է ուսուցչի կողմից ուսուցման գործընթացի միանձնյա ղեկավարում ու սուբյեկտիվ գնահատում: Այդ պայմաններում աշակերտների դերը պասիվ է, նրանք չեն մասնակցում հարցերի քննարկումներին, նրանց խնդիրն է միայն պահպանել լռություն ու կատարել ուսուցչի հանձնարարությունը: Սովորողների ինքնուրույն նախաձեռնություններն ուսուցիչը մերժում է կամ վերաբերվում թերհավատորեն, դրանով իսկ հակադրվում է աշակերտներին: Առաջանում է «հակամարտություն» ուսուցչի և աշակերտների միջև, ինչն էլ հետզհետե հանգեցնում է կայուն կոնֆլիկտային իրավիճակի: Ավտորիտար ոճով աշխատող ուսուցչի ղեկավարության ներքո աշակերտները գտնվում են մշտապես լարված վիճակում: Այսպիսի իրավիճակի արդյունքում ձևավորվում է հոգեբանական անջրպետ ուսուցչի և աշակերտների միջև, աշակերտների ոչ համարժեք ինքնագնահատական (սեփական ուժերի թերագնահատում), առաջանում են նևրոզներ, թշնամանք ուսուցչի, իսկ նրանից էլ առարկայի և ողջ ուսումնական գործընթացի հանդեպ:

Թողտվական ոճով շփվող ուսուցիչները խուսափում են մասնագիտական պարտականություններից, իրենց պատասխանատու չեն համարում ուսման

արդյունքների համար: Այսպիսի ուսուցիչների մոտեցումը գործին կրում է ձևական բնույթ, նրանք սահմանափակվում են միայն դասավանդմամբ: Անտարբեր են աշակերտի և դպրոցի խնդիրներին, թույլ են վերահսկում աշակերտների գործունեությունը և չեն մտահոգվում անձի զարգացման դինամիկայով: Այսպիսի ուսուցիչներին անվանում են «ձանձրացնող արհեստավարժ»:

Դեմոկրատական կամ ժողովրդավարական ոճը ենթադրում է ուսուցչի կողմնորոշումը դեպի աշակերտի անձի զարգացումն (անձնակողմնորոշիչ մոտեցում) ու աշակերտի դերի ակտիվացումն ուսումնադաստիարակչական գործընթացում: Այս ոճով շփման պայմաններում աշակերտը պասիվ օբյեկտից վեր է ածվում ակտիվ սուբյեկտի: Աշակերտները ակտիվորեն ներգրավվում են որոնողական ուսումնահիմացական գործընթաց, որի կազմակերպումը հիմնված է սովորողի ներքին դրդապատճառների վրա: Ուսումնական հարցի ազատ և անկաշկանդ քննարկման արդյունքում սովորողները ուսուցչի հետ միասին հանգում են որոշակի եզրակացության: Դեմոկրատական շփման ոճի ամենաէական առանձնահատկությունն այն է, որ դասարանում ստեղծվում է բարենպաստ սոցիալ-հոգեբանական մթնոլորտ, որտեղ աշակերտներն իրենց զգում են գործընթացի լիիրավ անդամ, ովքեր իրավունք ունեն կայացնել ինքնուրույն որոշում և կրել դրա նկատմամբ որոշակի պատասխանատվություն: Արդյունքում աշակերտները ձեռք են բերում ինքնավստահություն և ռեալ ինքնագնահատման կարողություն (վստահություն սեփական ուժերի նկատմամբ), ունենում են պաշտպանվածության և ապահովության զգացում:

Աշխարհագրության ուսուցչի գործունեության բաղադրամասերը: Դպրոցում աշխարհագրական կրթության բովանդակությունը ընդգրկում է ոչ միայն աշխարահագրական գիտելիքներ, կարողություններ և հմտություններ, այլև ստեղծագործական գործունեության փորձ և հուզաարժեքային վերաբերմունք շրջակա միջավայրի նկատմամբ: Այս ամենի կրողն ու ձևավորողը անշուշտ աշխարհագրության ուսուցիչն է: Բազմաթիվ հոգեբանական խնդիրներ կենտրոնանում են աշխարհագրության ուսուցչի շուրջ: Նրա վերաբերմունքը դեպի աշակերտը, երեխայի

հոգու վրա ներգործությունը մի կողմից, իր սեփական աճն ու զարգացումը, սերը աշխարհագրության նկատմամբ մյուս կողմից, ստեղծում են հոգեբանական մի բարդ համակարգ, որի բաղադրամասերը ձևավորում են աշխարհագրության ուսուցչի կերպարը՝




Մանկավարժական ուղղվածություն
Հուզականություն
Ուսուցչի ուղղվածություն
գիտելիքներ
Հուզական ճկունություն
Դեպի աշակերտը
հմտություններ
Հուզական կայունություն
Դեպի ինքն իրեն
կարողություններ
Էքսպրեսիվ վարք
Դեպի առարկան
Ուսուցչի արհեսավարժական ինքնագիտակցության առավել բարձր մակարդակ

Ուսուցման ընթացքում յուրացվում է սերունդների սոցիալական փորձը, ձևավորվում հուզարժեքային վերաբերմունք շրջակա իրականության նկատմամբ, զարգանում են սովորողների ընդունակություններն ու հետաքրքրությունները:

1. Աշխարհագրության ուսուցման ընթացքում աշակերտի իմացական գործունեությունը ներառում է՝

- ✓ Աշխարհագրության գիտելիքների յուրացում,
- ✓ Մտավոր ունակությունների և իմացական հետաքրքրությունների զարգացում,
- ✓ Աշակերտի դիալեկտիկամատերիալիստական աշխարհայացքի և բարոյական հատկանիշների ձևավորում:

2. Գիտելիքի ձեռք բերումն իրականանում է հետևյալ փուլերով՝ ընկալում, իմաստավորում, մտապահում և կիրառում: Նշված փուլերը սերտ փոխկապակցված են միմյանց հետ և միասին ապահովում են գիտելիքի յուրացման պատշաճ մակարդակը:

3. Ուսուցումն է խթանում աշակերտի հետաքրքրությունը ուսման և առարկայի հանդեպ, դրանով իսկ ընդլայնում է սովորողների մտավոր կարողությունները, ստեղծագործական ընդունակությունները, բարձրացնում է ուսման արդյունավետությունն ընդհանրապես: Ուսուցչի բարերար ազդեցությունը առարկայի հանդեպ աշակերտի մոտ ձևավորված վերաբերմունքի վրա համարվում է ուսուցչի մասնագիտական վարպետության ցուցանիշ:

4. Այստեղից հետևություն, ուսուցչի գործունեության բաղադրամասերի մեջ պիտի մտնեն մանկավարժական իրազեկությունը՝ գիտելիքներ, կարողություններ, հմտություններ, ինչպես նաև մանկավարժական ուղղվածություն՝ ուսուցչի ուղղվածությունը դեպի աշակերտը, դեպի ինքն իրեն և դեպի առարկան, նաև հուզական ճկունություն, հուզական կայունություն և էքսպրեսիվ վարք, որոնք հիմքն են ուսուցչի արհեստավարժական ինքնագիտակցության առավել բարձր մակարդակի:

Օգտագործված գրականության ցանկ

1. Մինասյան Ա., «Աշխարհագրության ուսուցման մեթոդիկա» ուսումնական ձեռնարկ, Երևան, 2013 թ.:
2. Մինասյան Ա.,«Աշխարհագրության ուսուցման մեթոդներն ու միջոցները» ուսումնական ձեռնարկ, Երևան, 2011 թ.:
3. Սարգսյան Խ. Բ.,Աշխարհագրության դասավանդման մեթոդիկա, «Զանգակ-97», Երևան, 2002 թ.:
4. Сушкова О.Ю. Методика обучения география. М., 2009 г..
5. Петрова Е., Теория и методика обучения географии, Томск. 2010 г..